Գուրգեն Մահարի

Ծաղկած փշալարեր

15

. . . Օրացույցները չեն, որոնք բերում են գարունը, ոչ էլ աքաղաղները՝ լուսաբացը: Հաճախ օրացուցային ամենաստույգ ձմռանն ավելի մոտ կարելի է զգալ գարնան ներկայությունը, քան երբ գարուն է: Երբ ես դուրս եկա Առաջինից, ինձ հայտնի դարձավ, որ ինչ-որ վայրում շրջում է գարնան շունչը, և ինչ-որ տեղ գիշերը մոտենում է իր վախճանին:

Ի՜նչ անհեթեթություն: Այդ միևնույն է, թե պնդենք, որ ուժեղ երկրաշարժից հետո ծաղիկներն սկսեցին ավելի բարկ բուրել կամ նման մի բան:

Առաջինից ես հեռացա հարստացած ևս երեք վերքով: Երգով չհասկանաք, խոսքը վերքի մասին է: Եվ խոսքը հարստության մասին է: — Պարադո՛քս, — կասեր Լարիսա Սեմյոնովնան: Թող այդպես լինի: Առաջին վերքը հասցրեց ինձ նույն Լարիսա Սեմյոնովնան իր կապույտ աչքերի լուսավոր արցունքներով: Ի՜նչ մեծ հարստություն: Երկրորդ վերքը տվեց ինձ գերմանուհին, ինձ խոցեց նրա կերպարանքը, նա տառապանքից քարացած աստվածամոր կերպարանք ուներ, որի որդին խաչվել է յոթ անգամ . . . երրորդ վերքը ես ստացա իրեն Բալունց Հեթում անվանողի անանուն, հեռու ու հարազատ ցավով լեցուն աչքերից:

Ես Աշոտ դայուն պատմեցի այն ամենի մասին, ինչ տեսել ու լսել էի Առաջինում՝ մի օրվա ընթացքում: Մամոյին պատմեցի մի քիչ այլ կերպ: Ընդհանրապես նման դեպքերում չպետք է վախենալ ստից: Վատ է, եթե դու ստում ես ի նպաստ քեզ, մի օգուտ ստանալու համար, բայց երբ դու ստում ես հօգուտ մերձավորներիդ, դա

պետք է համարել անձնազոհություն: Ամենասարսափելին դա, իհարկե, պետական սուտն է . կապիտալիստական և իմպերիալիստական կարգերը ձեզ օրինակ: Ես Մամոյին ասացի, որ իր խանումը շա՛տ, շատ բարևներ ասաց, որ թող չմտածի ոչ մի բանի մասին և որ շուտով կարժանանան իրար տեսության: Գալով «չոճուխին», ես ասացի, որ այո՛, այո՛, աչքովս տեսա, որ իրեն շատ նման է և միայն ականջները մայրենական են: Մամոն շատ զգացվեց, այնքան, որ նրա բեղերը դողացին: Նա համբուրեց իմ մի աչքը և ասաց, — երանի՛ քո երկու աչքերին: Մամոն չուզեց օգտվել տրամաբանությունից, ըստ որի, եթե խանումը վերադառնում է, ուրեմն երեխան . . . նա բարվոք համարեց իրեն հանձնել երջանիկ անգիտության կամ՝ «Ինչ կլինի, թող լինի» փիլիսոփայական ինքնահոսին: Շնորհակալություն Մամոյին, այլապես եթե նա քրքրեր խնդիրը, ես հանուն անձնվիրության, նոր ստեր պիտի հնարեի, սուտը ստով փրկելու համար: Բառախաղ չէ՛ ժամանակակից, ապրող մի իմաստունի այն ասույթը, ըստ որի՝ սերը սիրով կարելի է պահպանել, սուրը՝ սրով, իսկ սուտը՝ ստով: Իհարկե, եթե ես իրավունք ունենայի բարձրանալու պահակային աշտարակը, ես այդ բարձրությունից կթքեի հիշյալ իմաստունի վրա . բայց դա կապված է տեխնիկական անհաղթահարելի դժվարության հետ: Ես չեմ կարող աշտարակի բարձրությունից թքել ինքս ինձ վրա:

Երբ ես Աշոտ դայուն պատմեցի Բալունց Հեթումի մասին, նա փորձեց ծիծաղել, բայց դա նրան չհաջողվեց: Նա երևի բավականանար ժպտալով, բայց դա էլ բանի նման չէր: Նա նայեց ինձ խոնավ, ավելի ճիշտ կլիներ ասել՝ տամուկ աչքերով, որտեղ չէր կարելի չզգալ անսահման ցավ ու դառնություն: Նա հազաց և բարձր, ոչ իր ձայնով հարցրեց .

— Հետո՞, հետո՞ . . . էլ ուրիշ ի՞նչ տեսար . . .

. . . Երկուշաբթի առավոտյան բրուտանոց մտավ մեր վերականգնված քառյակը լրիվ կազմով: Ինչպես հաճախ, այսօր էլ մենք, կարծես նախապես պայմանավորված, որոշել էինք այնպես պահել մեզ, կարծես ոչինչ չէր պատահել և բացվել էր մեր նախկին, սովորական աշխատանքային օրերից մեկը, երբ մենք անխոս կամ հաճախ կես խոսքից հասկանում էինք իրար և կատարում մեր գործը՝ հաշտ իրար, աշխարհի և մեր ճակատագրի հետ:

Առաջինը Մամոն խախտեց չգրված պայմանագիրը: Նա քրթմնջալով, մրթմրթալով, ախ ու վախ անելով գերմանուհու գործերի գալերեյան փոխադրեց իր անկյունից հանդիպակաց անկյունը և դասավորեց լայն մի տախտակի վրա: Հետո կարգի բերեց իր անկյունը . թրջված ավելով սրբեց փոշին, փռեց նորից իր չուլ ու փալասը, մի ծխախոտ ծխեց, խորասուզվեց մախորկայից էլ դառը մտքերում և չորանոցից դուրս եկավ այն րոպեին, երբ ես եռացրած ջրով ուշքի էի բերել սառած հողը և պատրաստվում էի տաշտ մտնել: Նա մոտեցավ ինձ և Աշոտ դայուն լսելի ձայնով ասաց .

— Երեկ մենք հանգստանում էինք, դու աշխատեցիր, էսօր քո հանգստանալու օրն է . . . ինչ-որ պետք է, ես կանեմ . . .

Ես գիտեի (օ՜ . . .), ես գիտեի, որ սերը փոքրատառ մարդուն դարձնում է մեծատառ, բայց այսքա՞ն մեծատառ: Ճի՜շտ, ճի՜շտ, ես այդ չէի սպասում:

. . . Մամոն վերջնականապես ձևավորեց իր սեփական Լուվրը: Բոլոր արձանիկներն ու բյուստերը դասավորված էին այնպես, որ իր անկյունից նայողը կարող էր տեսնել բոլորին: Առաջ նա անանուն կամ «Լյութմիլայի դոստը» բյուստը տեղավորել էր այնպես, որ չերևար: Հիմա նա էլ ստացել էր երևալու քաղաքացիական իրավունք: Մամոն Աշոտ դայուն հրավիրեց իր ցուցահանդեսի բացմանը, որին ներկա եղանք նաև ես և Իոնասը խորհրդակցական ձայնի իրավունքով: Աշոտ դային բարձր գնահատեց Մամոյի աշխատանքը: Նա հատկապես շեշտեց, որ Մամոն շատ ճիշտ է վարվել «Լյութմիլայի դոստին» պատվավոր տեղ տալու համար, այն էլ իր կողքին: Այս կապակցությամբ Մամոն հայտարարեց մեծահոգաբար .

— Հալբա՜թ, օ դա ադամ դըր . . . Իհարկե, նա էլ մարդ է . . .

. . . Մամոն վերստուգեց իրեն ոտից-գլուխ: Ոտնամաններից մեկը տվեց նորոգելու, շորերի վրա երևացող պատահական կամ պատճառաբանված ճեղքվածքները լիկվիդե ըրավ, կարգի բերեց բոլոր օղակ կոճակները . . . խոհանոցի պատուհանի ապակու մեջ իրեն դիտելով, նա մտածեց, որ վատ չէր լինի, եթե մի փոքր բարեմշակման ենթարկվեին բեղերը, բայց ինչպե՞ս: Ինքը

չուներ համապատասխան գործիք այդ գործողությունը կատարելու համար և եթե ունենար էլ, երբեք ձեռք չէր բարձրացնի սեփական բեղերի վրա: Կառապանների, կոշկակարների և այլ արհեստով զբաղվող խոնարհ մարդկանց համար բեղը տղամարդության և ընդհանրապես մարդկության խորհրդանշան է՝ ի հարկին, նրանք, համոզելու համար իրենց հաճախորդներին՝ երդվելիս՝ չէին անհանգստացնի ո՛չ աստծուն, ո՛չ էլ որևէ գերբնական ուժի, նրանք պարզապես սեփական բեղերի վրա են երդվում, և դա հնչում է ավելի ազդու և համոզիչ: Մնում է հույսը դնել սափրիչների վրա: Այն էլ կա, որ Մամոն ոչ մի գնով սափրիչի հետ բանակցությունների մեջ չի մտնի՝ նյութ ունենալով սեփական բեղերը: Ամենից շատը սափրիչն ինքը պիտի գլխի ընկնի և չխկչխկացնի մկրատը Մամոյի բեղերի լայնությամբ ու երկարությամբ, իսկ ինքը ձևացնի, որ ոչինչ չի նկատում: Սակայն որտեղի՞ց գտնես նման իմաստուն սափրիչ:

Ա՛յս է բանը:

Մամոյի պահեստը կենդանության նշաններ է ցույց տալիս: Երևացին փոքր ու միջին որակի կարտոֆիլներ, այլև երկու մեծ գլուխ սիբիրյան շաղգամ, որին տեղացիները տուրնիպս են կոչում: Ըստ էության, վերջինս քաղցր բողկ է, մարդիկ այն սահմանել են խոզերին կերակրելու համար, սակայն մարդը գիտե նրա հարգը և ուտում է սիրով, մանավանդ եթե քաղցած է: Այդ կողմից խոզերն ավելի նեղսիրտ են, եթե հավատանք այն բանին, որ խոզերը նարնջի հարգը չգիտեն: Իսկ երբ Մամոն ձեռք բերեց նաև մի քանի մանրագլուխ սոխ, իրեն հարուստ ու ապահովված զգաց ագարակատիրոջ նման, մի անգամ ևս հաստատելով երջանկության հարաբերականության ահմեդյան տեսությունը:

Մամոյից ամեն բան կարելի էր սպասել, բացի երգելուց: Եթե ընդունենք, որ երգը մարդու հավիտենական ուղեկիցն է նրա և՛ լավ, և՛ վատ օրերին, ապա Մամոն մենակ էր, Մամոն երգ չուներ: Երբ աշխատելիս Աշոտ դային քթի տակ «Ձախորդ օրեր» էր քաշում, երբ Սանոն իր «Քննիչ Տիգրանից» կալանավորական արիաներ էր երգում, Աշոտ դային դառնում էր Մամոյին: — Մամո՛, մի բան էլ դու ասա . . . — Պատասխանը մեկն էր, — Մամոն իր կյանքում մի անգամ է երգել, ուստա, այդ բռնվելու առաջին օրն էր . . . մեկ էլ

կերգի, երբ կազատվի . . . Չէ՛, մի՛ ստիպեք, չի երգի Մամոն, ինչպես չի երգի ահա այս անշունչ կավը: Բայց եկավ գերմանուհին և նրա մատների տակ անշունչ կավը շունչ առավ ու երգեց: Բավարարո՞ւմ էր այդ երգը արվեստի բարձր պահանջներին և ինչ չափով, այդ չէր կարևորը, կարևորն այն էր, որ կավը երգեց, իսկ Մամոն . . . Մամոն լուռ մնաց:

Ինչպես ամեն բան, առաջինը Իոնասը նկատեց: Այդ ճաշի ընդմիջման ժամանակ էր: Մամոն քաշվել էր չորանոց, իր անկյունը, իսկ մենք երեքս զբաղված էինք . . . եթե ճիշտը խոսենք, ոչնչով չէինք զբաղված, իսկ եթե զբաղված էինք, ապա զբաղված էինք ոչինչ չանելով: Ինչ-որ բան կասկածելով՝ Իոնասը չորանոցի դռան նեղ բացվածքը քիչ լայնացրեց, ապա մոտեցավ մեզ և շշուկով հաղորդեց .

— Երգում է . . . իմ ականջներն ինձ չեն խաբում:

Նախ Աշոտ դային, ապա ես առանց նկատվելու մոտեցանք, ականջներս սրեցինք . . . Իսկապես, ինչ-որ երգի ինչ-որ հնչյուններ հասան մեզ ու հանգան: Հիմա որ՝ ոչինչ չի լսվում: Մենք նայեցինք միմյանց և լռությամբ որոշեցինք եղածը համարել խաբկանք ու հալյուցինացիա: Անցավ ևս երկու օր: Առաջինում աշխատող մեր ճամբարի գրասենյակային աշխատողների միջոցով խուլ շշուկներ հասան փոքրիկ Մուի խիստ անժամանակ մահվան մասին: Մեր եռյակը հանկարծակի չեկավ . Լարիսա Սեմյոնովնան արդեն ինձ հաղորդել էր այդ տխուր լուրը: Մենք որոշեցինք Մամոյին ոչինչ չասել այդ մասին: Մամոն շրջում էր մռայլ ուրվականի նման, աշխատում էր ամենայն բարեխղճությամբ, անգամ շեշտված եռանդով, և այս մեզ ավելի էր անհանգստացնում, քան եթե թերանար իր պարտականություններում: Նա ավելի շատ էր առանձնանում իր անկյունում: Մի երկու անգամ ես նկատեցի նրան աղոթելիս, երեսը դեպի հարավ, ծնկաչոք, բայց այդ մասին ինքս էլ չգիտեմ ինչու՝ անգամ Աշոտ դայուն ոչինչ չասացի: Ի՞նչ կար զարմանալու . գուցե այն, որ առաջներում նա չէ՞ր աղոթում և հիմա՞ է փորձում կապ հաստատել մեծն ալլահի հետ . . . դարձյալ երևույթը միանգամայն բնական է և բանական . հայտնի է, որ կան մարդիկ, որոնք աստծուն հիշում են, երբ ընկնում են նեղ կացության մեջ: Դյուժինգրադում, ինչպես հիշում ենք, ապրում էին զանազան մարդիկ, զանազան

հասկացողությամբ: Կային հավատացյալներ և կային երդվյալ աթեիստներ: Այս բանը շեշտվեց, երբ մեր կամերան բերին Էջմիածնի հոգևորականներից մեկին: Կալանավոր հոգևորականի ներկայությունը բավական եղավ, որ երևային հականեր և համաներ: Համաները շրջապատեցին տեր հորը գուրգուրանքով և հարգանքով: Դյուժինգրադի բնակիչները հերթով հերթապահում էին . այս հերթապահությունը կայանում էր այն բանի մեջ, որ օրվա երկու հերթապահներն ավլում էին կամերան, հետևում մաքրությանը և, որ ամենից կարևորն է, առավոտյան և երեկոյան, երբ մարդկանց տանում էին զուգարան, առաջից հանդիսավոր կերպով քայլում էին երկու հերթապահներ, նշանավոր թիթեղե ամանի երկու ականջներից բռնած: Համաները միջնորդություն հարուցեցին, որ կամերկոմը, որպես բացառություն, ազատի հոգևոր հորն այդ ան . . . ան . . . անհարմար աշխատանքից: Անաստվածները ծառացան այս միջնորդության դեմ: — Մեր մեջ, — ասացին նրանք, — կան կուսակցական և կառավարական պատասխանատու աշխատողներ, որոնք տանում են այդ պղնձե ան . . . ան . . . անհարմար ամանն առանց քաշվելու: Ի՞նչ բացառության մասին է խոսքը: Ո՛չ մի բացառություն: — Համաները ելքը գտան . երբ գալիս էր տեր հոր հերթապահության օրը, շարքային հավատացյալներն ազատ կերպով և առանց քաշվելու օգտվում էին հոգևոր հոր հոգևոր ծառայություններից . նրանք ամեն օր, հերթով, մի կերպ գտնում էին տեր հոր ականջներից մեկը և պատմում իրենց տեսած երազը: Տեր հայրը մեկնում էր երազները գիտական ամենաբարձր մակարդակով: Աթեիստները նայում էին այս արարողություններին անսքող արհամարհանքով . հատկապես քաղխորհդի նախագահը, «ճապոնացին», տանելով չէր տանում հավատացյալների միամտությունն ու «փարաջավորի ժուլիկությունը»: Բայց . . . բայց ամեն ինչ հոսում է, ամեն ինչ փոխվում: Մի օր, վաղ լուսաբացին զարթնած մի երկու կալանավորներ չհավատացին իրենց աչքերին: Մեծ դժվարությամբ «ճապոնացին» կարողացել էր զգուշությամբ, հաղթահարելով դժվարությունները, հասնել տեր հորն ու կռացած, շշուկով պատմել իր երազը: Ինչ խոսք, տեր հայրն ընդունել էր նրան քրիստոնեական մեծահոգությամբ և անհիշաչարությամբ ու տվել նրա երազներին սպառիչ բացատրություն: «Ճապոնացու» «դարձը» Դյուժինգրադում տարածվեց կայծակի արագությամբ և դրանով էլ սառույցը ջարդվեց: Դյուժինգրադն ունեցավ իր խոստովանահայրը, որին հավատում էին և՛ հավատացյալները և՛ անհավատները: Մամոն աթեիստ չէր, Մամոյի կապերը կարող էին ալլահի հետ

թուլացած լինել, բայց հիմա, երբ նա ապրում էր հոգեկան ծանր տագնապներ, ձեռքը նետել էր աստծո փեշին: Ի՞նչ կա զարմանալու:

Իսկ հիմա . . .

Այո՛, խուլ պետք էր լինել չլսելու համար Մամոյի երգը չորանոցից: Մամոն երգում է: Սա երկու անգամ երկու՝ չորսի պես պարզ է հիմա: Մնում է պարզել, թե ի՞նչ է երգում: Այդ էլ դժվար չէ: Նա հիմա երգում է ինքնամոռաց եռանդով, մի ձեռքն ականջին, գլուխը ցնցելով . երգն էլ ծանոթ է, ծանոթ ու տարածված:

Մի՛ լա, աչքի՛ս լույս, մի՛ լա,
Օր է, կանցնի, մի՛ լա,
Ով որ փակեց այս դուռը,
Մի օր կբանա, — մի՛ լա . . .

— Աղ-լա՜մա, ախ, աղլա-մա՜ . . . — քաշում է Մամոն, և ապա տիրում է ծանր մի լռություն ոչ միայն չորանոցում:

— Օդը դժվար է, — կասեր Իոնասը: